ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/21** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի մայիսի 29-ին** կնքված **N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/21»** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի նոյեմբերի 14-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված պատմության ու ճարտարապետական-մշակութային կոթողների վերաբերյալ Հեղինակի կողմից լրացուցիչ նյութերի տրամադրման հետ պայմանավորված, Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել պայմանագրով նախատեսված հրատարակման աշխատանքների փուլի՝ մակետի (ազդօրինակի) ներկայացման ժամկետը, համապատասխանաբար երկարաձգելով աշխատանքի կատարման՝ գրքի հրատարակման և հանձնման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքի փուլի կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2017 թ-ի դեկտեմբերի 14-ը և աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2018 թ-ի հունվարի 8-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ.

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տաթևիկ Սուքիասյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78.

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/21» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» 11 2017թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հիմնադրամն, ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ս. Կարապետյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի մայիսի 29-ին կնքված պետության կարիքների համար հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման **N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/21»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1. Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում աշխատանքի փուլի կատարման ժամկետի ավարտը՝ **«15» նոյեմբեր, 2017թ.»** բառերը փոխարինել **«14» դեկտեմբեր, 2017 թ.»** բառերով, իսկ աշխատանքի կատարման ժամկետի ավարտը՝ **«10» դեկտեմբեր, 2017 թ.»** բառերը փոխարինել **«08» հունվար, 2018 թ.»** բառերով:

1.1.2. Պայմանագրի 4.1.1 կետում **«Պայմանագրի գնի 60 %-ը՝ 2 784 000 (երկու միլիոն յոթ հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամը»** բառերը փոխարինել **«Պայմանագրի գնի 100 %-ը՝ 4 640 000 (չորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հիմնադրամ հասցեն՝ Երևան, Բաղրամյան 24 դ հեռախոս՝094-133700 ՀՎՀՀ 00053543 հ/հ 2474500069910000 «Արդշինինվեստբանկ»
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ս. Մուրադյան	Ա. Կարապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ